

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Դայմենշն» ՓԲԸ

Տնօրենների խորհրդի

27.04.2023թ.-ի նիստի կողմից

խորհրդի նախագահ՝



Դավիթ Հակոբյան

«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԴԵՄ

ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

2023

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն քաղաքականությունը «Դայմենշն» ՓԲԸ ներքին հսկողության համակարգում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության նպատակի, տարրերի, սկզբունքների, հիմնական միջոցառումների սահմանումն է:

2. Սույն Քաղաքականությունը ընդունվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի թիվ ՀՕ-80-Ն օրենքի 23-րդ հոդվածի, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2014թ. հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի համաձայն՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

3. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության ապահովման շրջանակներում «Դայմենշն» ՓԲԸ իր կողմից իրականացվող բոլոր գործառնություններում առաջնորդվում է սույն քաղաքականությամբ, ինչպես նաև «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային ստանդարտներ սահմանող ՖԱԹՖ 40 հանձնարարականներով, ոլորտը կարգավորող միջազգային կոնվենցիաներով, և այլ իրավական ակտերով:

4. Քաղաքականության և «Դայմենշն» ՓԲԸ ներքին ընթացակարգերի միջև հակասության դեպքում գերակայում է սույն քաղաքականությունը:

5. Սույն քաղաքականությունը հաստատվում է «Դայմենշն» ՓԲԸ խորհրդի կողմից և ենթակա է վերանայման ամենամյա պարբերականությամբ: Վերանայման արդյունքում փոփոխությունների անհրաժեշտության բացակայության դեպքում քաղաքականությունը համարվում է վերահաստատված:

ԳԼՈՒԽ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Սույն քաղաքականության մեջ օգտագործվող հասկացությունները մեկնաբանվում են ստորև սահմանված իմաստով.

- **գործարար հարաբերություն՝** «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ և հաճախորդի միջև պարբերական գործարքների կատարումն է, ներառյալ «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ կողմից հաճախորդների հետ թղթակցային կամ նմանատիպ այլ հարաբերությունների հաստատումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, Հաճախորդին մատուցվող պարբերական ծառայությունները,

- որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով,
- **գործարք՝ «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ** և Հաճախորդի կամ վերջինիս լիազորված անձի միջև կատարվող գործառնություն, Հաճախորդի կամ Լիազորված անձի և այլ անձի միջև գործարք, որը կատարվում է Ընկերության միջոցով կամ հանդիսանում է Ընկերության ուսումնասիրության (դիտարկման) առարկա Հաճախորդի կամ Լիազորված անձի և այլ անձի միջև Գործարք, որը կատարվում է Ընկերության միջոցով կամ հանդիսանում է Ընկերության ուսումնասիրության (դիտարկման) առարկա, ինչպես նաև «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ միջոցով կատարվող գործառնություն,
 - **միանգամյա գործարք՝** գործարք, որի արդյունքում պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում, և (կամ) որը գործարար հարաբերության հաստատում չի ենթադրում.
 - **գործարքի մյուս կողմ՝** Հաճախորդի կողմից իրականացվող Գործարքի այլ մասնակից, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում է Գործարքից բխող գույքը,
 - **գույք՝** Ցանկացած տեսակի նյութական բարիք, քաղաքացիական իրավունքի շարժական և անշարժ օբյեկտ, ներառյալ՝ ֆինանսական դրամական միջոցներ, արժեթղթեր և գույքային իրավունքներ, գույքային իրավունքները և շահերը հավաստող փաստաթղթեր կամ այլ միջոցներ, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրված տոկոսներ, շահութաբաժիններ կամ այլ եկամուտներ, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքներ,
 - **հաճախորդ՝ «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ** հետ կամ միջոցով միանգամյա գործարք կատարող և/կամ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող, ինչպես նաև «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ-ում հաշիվ բացելու և այդ հաշվով սպասարկվելու իրավունք ունեցող անձն է, այդ թվում՝ տեղական ֆինանսական հաստատություններ, պետական մարմիններ, միջազգային կառույցներն ու կազմակերպությունները և օտարերկրյա ֆինանսական հաստատությունները: Սույն քաղաքականության իմաստով հաճախորդ են համարվում նաև «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ գործընկերները և մատակարարները, ինչպես նաև «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ անդամների այն հաճախորդները, ում հաշիվները անդամների կողմից բացվել են և սպասարկվում են «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ -ում,
 - **լիազորված անձ՝** Հաճախորդի հանձնարարությամբ և Հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողությունների իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ Օրենքով սահմանված այլ հիմքով Հաճախորդի կողմից տրված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձ,
 - **հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն՝** «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ կողմից հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված

մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց է, որը ներառում է՝

ա. հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի ինքնության ստուգումը) նույնականացումը,

բ. գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզումը,

գ. գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը,

- **հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն՝** Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընդլայնված կիրառում, որի շրջանակներում ի լրումն պատշաճ ուսումնասիրության միջոցառումների իրականացվում են նաև հետևյալ միջոցառումները՝

ա. գործարար հարաբերության հաստատման/գործարքի կատարման համար Ներքին դիտարկումների մարմնի գլխավոր աշխատակցի հավանության ստացում,

բ. հաճախորդի եկամուտի և ունեցվածքի աղբյուրը ճշտելուն ուղղված միջոցառումների ձեռնարկում,

գ. գործարքի/գործարար հարաբերության նպատակի մանրամասն ուսումնասիրություն,

դ. ընթացիկ հավելյալ ուսումնասիրության իրականացում,

- **ՓԼ/ԱՖ ռիսկ՝** ՓԼ/ԱՖ վտանգավորության մասին վկայող հանգամանքի ի հայտ գալու հավանականությունն է, որը կարող է գնահատվել հաճախորդին և(կամ) գործարքին բնորոշ չափանիշներով,

- **բարձր ռիսկի չափանիշ՝** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին իրավական ակտերով սահմանված չափանիշ, որը վկայում է ՓԼ/ԱՖ բարձր հավանականության մասին,

- **ցածր ռիսկի չափանիշ՝** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափանիշ, որը վկայում է ՓԼ/ԱՖ ցածր հավանականության մասին,

- **քաղաքական ազդեցություն ունեցող անձ՝** տեղական և օտար/արտասահմանյան երկրի կամ տարածքի նախկին կամ գործող բարձրաստիճան պաշտոնատար անձ, որն իրականացրել կամ իրականացնում է պետական, քաղաքական կամ հանրային բնույթի նշանակալից գործառույթներ,

- **իրական շահառու՝** Ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունը իրականացվում է և (կամ) որին պատկանում է իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդը կամ այն անձը, որի անունից կամ օգտին գործարքը կամ գործարար հարաբերությունն իրականացվում է: Իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում նաև այն

Ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը: Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, որը՝

ա. քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) քսան և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները կամ

բ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ կամ

գ. գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

- **կեղծ («շել») բանկ՝** բանկն է, որը հիմնադրված, գրանցված, լիցենզավորված կամ այլ կերպ ինկորպորացված լինելով որևէ երկրում, իրականում դրա տարածքում չի կառավարվում կամ չունի փաստացի գտնվելու կամ գործունեության վայր, և որը փոխկապակցված չէ արդյունավետ համախմբված վերահսկողության ենթակա, կարգավորվող գործունեություն իրականացնող ֆինանսական հաստատությունների որևէ խմբի հետ,
- **Հաշվի օպերատոր՝** Դիփենդ համակարգի մասնակից, որը «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ -ին է փոխանցում հաշվետրերի և թողարկողների կողմից ներկայացված հանձնարարականները և այլ տեղեկությունները (փաստաթղթերը), ինչպես նաև իրականացնում է «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ծառայությունների մատուցման միջնորդությունն այլ ձևերով՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների մարմնի ներքին իրավական ակտեր, «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ հետ պայմանագրի և կանոնների,
- **Օրենք՝** «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք
- **տարանցիկ հաշիվ՝** այն թղթակցային հաշիվն է, որն ուղակիորեն օգտագործվում է թղթակից ֆինանսական հաստատության հաճախորդի կողմից՝ իր անունից գործարքներ կատարելու համար,
- **ՖԱԹՖ՝** Ֆինանսական միջոցառումների հատուկ հանձնախումբ, որը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջազգային ստանդարտներ մշակող մարմին,
- **թիրախային ֆինանսական պատժամիջոցներ՝** ՄԱԿ անվտանգության խորհրդի բանաձևերով սահմանված անձանց նկատմամբ կիրառելի սահմանափակումներ, ներառյալ՝ գույքի սառեցում, կասկածելի գործարքի մասին ՖԴԿ հաշվետվության ներկայացում:

ԳԼՈՒԽ 3. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿԸ, ՏԱՐԻԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

7. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության գործառույթը «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին հսկողության համակարգի տարր է, որի ներդրման նպատակն է իրավական կառուցակարգերի մշակման և կիրառման միջոցով ապահովել «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ կողմից իրականացվող գործառնությունների համապատասխանությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտի ներպետական և միջազգային պահանջներին, ինչպես նաև բացահայտել, գնահատել և զսպել «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ կողմից իրականացվող գործառնություններում հնարավոր ՓԼ/ԱՖ ռիսկերը:

8. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության գործառույթը իբրև «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին հսկողության համակարգի տարր, գործում է եռաստիճան մոդելով, որի՝

1) Առաջին օղակը՝ «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ հաճախորդներին սպասարկող ստորաբաժանումներն են. վերջիններս պատասխանատու են հաճախորդների նույնականացման, հաճախորդների հետ գործարար հարաբերության հաստատման, գործարքների կատարման նպատակով տեղեկատվության հավաքագրման և պատշաճ ուսումնասիրության համար,

2) Երկրորդ օղակը՝ Ներքին դիտարկումների մարմինն է. վերջինս պատասխանատու է հավելյալ և ընթացիկ ուսումնասիրությունների, կասկածելի գործարքների վերլուծությունների, «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ՓԼ/ԱՖ ռիսկերի գնահատման, ՓԼ/ԱՖ ոլորտի զարգացումների վերաբերյալ ուսուցումների կազմակերպման, սույն քաղաքականությամբ և վերջինիս հիման վրա ընդունվող իրավական ակտերի փոփոխությունների, համապատասխանության ռիսկերի կառավարման այլ ընթացակարգերի, ուղեցույցերի մշակման համար,

3) Երրորդ օղակը՝ «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ուղիտորն է. վերջինս պատասխանատու է առաջին և երկրորդ օղակների աուդիտի իրականացման համար:

9. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության գործառույթի բոլոր օղակները առաջնորդվում են ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ և ձեռնարկում են բացահայտված ռիսկերին համարժեք միջոցառումներ:

10. Ներքին դիտարկումների մարմինը ներառում է ծառայության ղեկավարին (գլխավոր աշխատակցին) և աշխատակիցներին, հանդիսանում է ինքնուրույն ստորաբաժանում և ուղղակիորեն ենթակա է «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ գործադիր տնօրենին և խորհրդին:

11. Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարն ունի ավագ ղեկավարի կարգավիճակ, համակարգում է «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության գործընթացը, որոշումները կայացնում է ինքնուրույն, իր գործառույթներն իրականացնելիս ուղղակիորեն հաշվետու է «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ գործադիր տնօրենին և խորհրդին: Ներքին դիտարկումների մարմնին հատկացվում են անհրաժեշտ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսները իր գործունեությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով:

12. Ներքին դիտարկումների մարմնին հասանելի են սույն քաղաքականությամբ և վերջինիս հիման վրա ընդունվող ներքին իրավական ակտերով սահմանված պարտականությունների կատարման համար անհրաժեշտ ցանկացած, այդ թվում՝ գաղտնիք հանդիսացող տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթուղթ):

13. «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ բոլոր աշխատակիցները «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ կողմից իրականացվող գործառնություններում իրենց պարտականությունները կատարելիս պետք է առաջնորդվեն սույն քաղաքականությամբ, Քաղաքականության հիման վրա ընդունվող ներքին իրավական ակտերով, «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ այլ ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի չափանիշներով, և «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ խնդիրների իրագործման անհրաժեշտությունից բխող շահերով, ինչպես նաև պետք է ներդնեն առավելագույն ջանքեր ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության գործառույթի արդյունավետ իրականացման համար:

Սույն քաղաքականությունը տարածվում է նաև Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգ անդամների, ներառյալ՝ Հաշվի օպերատորների նկատմամբ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում միջնորդավորված ծառայություններ իրականացնելիս: Սույն քաղաքականության և Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգ անդամների ներքին իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են առավել խիստ նորմերը:

ԳԼՈՒԽ 4. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

14. «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ -ն ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության նպատակով իրականացնում է սույն գլխով սահմանված միջոցառումները:

Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն

15. Թղթակցային կամ նմանատիպ այլ հարաբերություններ չեն հաստատվում կեղծ («շել») բանկերի, ինչպես նաև այն բանկերի հետ ովքեր ունեն թղթակցային կամ նմանատիպ այլ հարաբերություններ կեղծ («շել») բանկերի հետ:

16. «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ -ն չի բացում, թողարկում, տրամադրում կամ սպասարկում՝

1) անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ,

2) միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ,

3) ըստ ներկայացնողի արժեթղթեր:

17. Նախքան գործարար հարաբերության հաստատումը և/կամ գործարքների կատարումը ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ իրականացվում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, ընդ որում՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատվում է, գործարքները կատարվում են միայն հաճախորդի նույնականացման համար սահմանված տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո: Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ իրականացվում են նաև այն դեպքերում, երբ կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացման վերաբերյալ նախկինում ձեռքբերված տվյալների ամբողջականության և հավաստիության վերաբերյալ, կամ ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքի վերաբերյալ:

18. Հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նախքան գործարար հարաբերության հաստատումը, ինչպես նաև գործարքների կատարումը, «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ -ն հաճախորդից կարող է պահանջել հաճախորդի գործարար բնութագրի, գործարար հարաբերությանը/գործարքին առնչվող, դրանք հիմնավորող ցանկացած տեղեկություն/փաստաթուղթ:

19. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում իրականացնում է ՓԼ/ԱՖ ռիսկի գնահատում՝ հաճախորդին և գործարքին բնորոշ ՓԼ/ԱՖ բարձր և ցածր ռիսկերի չափանիշների հիման վրա: ՓԼ/ԱՖ ռիսկը կարող է փոփոխվել գործարքների կատարման ժամանակ կամ ընթացիկ ուսումնասիրության արդյունքում:

20. ՓԼ/ԱՖ բարձր և ցածր ռիսկի չափանիշների հիմք են ընդունվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված ՓԼ/ԱՖ ռիսկի չափանիշները: «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին իրավական ակտերով կարող են սահմանվել բարձր ռիսկի լրացուցիչ չափանիշներ:

21. ՓԼ/ԱՖ բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում ձեռնարկվում են հաճախորդի հավելյալ ուսումնասիրության միջոցառումներ:

22. Հաստատված գործարար հարաբերության շրջանակներում բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների հայտնաբերման նպատակով իրականացնում է նաև գործարար հարաբերության ընթացիկ ուսումնասիրություն, որը ներառում է ռիսկերի վրա հիմնված մոտեցմամբ գործարքների դիտանցումը և հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքագրված տեղեկությունների թարմացումը:

23. «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին իրավական ակտերով սահմանվում են հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում տեղեկությունների հավաքագրման, ընթացիկ ուսումնասիրության իրականացման, գործարքների կատարման, գործարար հարաբերության հաստատման ընթացակարգերը:

Լիազոր մարմնին ներկայացվող հաշվետվություններ

24. «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ Լիազոր մարմնին է ներկայացնում պարտադիր տեղեկացման հաշվետվություններ անկանխիկ գործարքների վերաբերյալ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը, ինչպես նաև կանխիկի հետ կապված գործարքների վերաբերյալ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը: Սույն կետով նախատեսված հաշվետվությունների կազմման և Լիազոր մարմնին տրամադրման կարգը սահմանվում է Օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, Քաղաքականությամբ և դրա հիման վրա ընդունված այլ ներքին իրավական ակտերով:

Կասկածելի գործարքներ/գործարար հարաբերություններ

25. Գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որակվում է կասկածելի և դրա վերաբերյալ հաշվետվություն տրամադրում ՀՀ ԿԲ Ֆինանսական դիտարկումների կենտրոնին, եթե առկա են կասկածներ, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը՝

1) Ստացվել է հանցավոր ճանապարհով, կամ

2) Կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ, կամ

3) Օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:

26.«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին իրավական ակտերով սահմանվում են գործարքը/գործարար հարաբերությունը կասկածելի որակելու ընթացակարգերը, այդ թվում՝ կասկածելիության չափանիշներ և տիպաբանություններ:

Գործարքների/գործարար հարաբերությունների կասեցում, մերժում դադարեցում

27. ՓԼ/ԱՖ կասկածի առկայության դեպքում գործարքը կարող է կասեցվել մինչև 5 օրով: Կասեցման դեպքում անմիջապես կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն է տրամադրվում ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոնին:

28. Այն դեպքում, երբ սույն քաղաքականությամբ և «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին իրավական ակտերով սահմանված կարգով հնարավոր չէ իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, գործարքի իրականացումը մերժվում է, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գործարար հարաբերությունը դադարեցվում և դիտարկվում է այդ մասին ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոնին կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվության ներկայացման հարցը:

29. «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին իրավական ակտերով սահմանվում են գործարքների/գործարար հարաբերությունների կասեցման, մերժման/դադարեցման ընթացակարգերը:

Ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցում

30. Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված ցանկերում (ահաբեկչության հետ կապված անձանց ցանկեր) ներառված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ կողմից ենթակա է անժամկետ սառեցման:

31. Թիրախային ֆինանսական պատժամիջոցների պատշաճ կիրառման նպատակով համապատասխան ծրագրային լուծումների միջոցով ապահովվում է ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի թարմացումների՝ անհապաղ, ոչ ուշ, քան երկօրյա ժամկետում, ներմուծումը «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ծրագրային համակարգեր:

32.«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին իրավական ակտերով սահմանվում է ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցման ընթացակարգերը:

ՓԼ/ԱՖ ռիսկերի բացահայտում, գնահատում և զսպում

33. Առնվազն տարին մեկ անգամ «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ -ն իրականացնում է իր գործունեությանը բնորոշ ՓԼ/ԱՖ ռիսկերի բացահայտման և գնահատման միջոցառումներ, և ապահովում բացահայտված ռիսկերի զսպման ուղղությամբ շարունակական քայլերի ձեռնարկումը:

34. ՓԼ/ԱՖ ռիսկերի բացահայտումը իրականացվում է հետևյալ քայլերի ձեռնարկմամբ.

1) Ներհատուկ ռիսկերի գնահատում՝ ըստ հաճախորդների, երկրների և մատուցած ծառայությունների/պրոդուկտների,

2) Ներհատուկ ռիսկերի զսպմանն ուղղված ներքին հսկողության համակարգերի գնահատում՝ ըստ իրավական ակտերի առկայության և գործունեության արդյունավետության,

3) Մնացորդային ռիսկի գնահատում, ըստ ներհատուկ ռիսկի տեսակների և ներքին հսկողության համապատասխան համակարգի գնահատականների համադրման արդյունքների:

35. «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում մշակվում է բացահայտված ռիսկերը զսպելուն ուղղված միջոցառումների ծրագիր, որը ներառում է նաև վերջինիս կատարման նկատմամբ հսկողության մեխանիզմները:

36. ՓԼ/ԱՖ ռիսկերի զսպմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատվում է «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ գործադիր տնօրենի կողմից:

37. «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ ներքին իրավական ակտերով սահմանվում է ՓԼ/ԱՖ ռիսկերի բացահայտման, գնահատման և զսպման ընթացակարգերը:

Հաշվետվողականություն

38. Ներքին դիտարկումների մարմինը յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություն է ներկայացնում «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ գործադիր տնօրենին և խորհրդին ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում կատարված աշխատանքների վերաբերյալ:

39. Ներքին ուսումնասիրությունն իրականացվում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի որոշման հիման վրա: Ներքին ուսումնասիրության վերաբերյալ գրավոր որոշումը (Ուսումնասիրության որոշում) հանձնվում է աշխատակիցներին և գործադիր տնօրենին:

40. Ուսումնասիրության որոշման մեջ նշվում են ուսումնասիրության նպատակները, ժամկետները և աշխատակիցների կողմից Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցին տրամադրվող

փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը և դրանց տրամադրման ժամկետները:

41. Ուսումնասիրության արդյունքները ամփոփվում են Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի հաշվետվության մեջ, որը ներկայացվում է գործադիր տնօրենին՝ ուսումնասիրության որոշման մեջ նշված ուսումնասիրության ժամկետի ավարտից հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

Ուսուցում

42. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխանության ոլորտում ներգրավված աշխատակիցների համար նվազագույնը տարեկան մեկ անգամ կազմակերպվում է ուսուցում ոլորտի զարգացումների, աշխատակիցների կողմից ձեռնարկման ենթակա միջոցառումների և ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ: «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ նոր աշխատակիցների համար կազմակերպվում է ուսուցում աշխատանքի ընդունվելուց հետո երեք ամսվա ընթացքում:

43. Ուսուցումների անցկացման ժամանակացույցը հաստատվում է «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ տնօրենի կողմից՝ հաշվի առնելով «ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և աշխատանքային գրաֆիկը:

44. Ուսուցումների անցկացման ժամանակացույցը ներառվում է Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից ներկայացվող հաշվետվության մեջ:

45. Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ուսուցումներն արձանագրվում են: Իրականացված ուսուցման նյութերը, դրան մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը հաշվառվում են և պահպանվում առնվազն 5 տարի ժամկետով:

Հավաքագրված տեղեկատվության փաստաթղթավորում և պահպանում

46. Սույն քաղաքականությամբ սահմանվող ցանկացած տեղեկատվություն պահպանվում է գործարար հարաբերության ավարտից կամ գործարքի կատարումից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

47. Պահպանման ենթակա տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հաշվառումը կատարվում է այնպես, որ անհրաժեշտության դեպքում հնարավոր

լինի վերականգնել այն աշխատակցի տվյալները, ով իրականացրել է հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը կամ պահպանման ենթակա տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) ձեռքբերմանն ուղղված գործողությունները:

48.«ԴԱՅՄԵՆՇՆ» ՓԲԸ -ն ապահովում է սույն քաղաքականությամբ սահմանվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) պահպանման անվտանգությունը և գաղտնիությունը:

Ներքին աուդիտի իրականացում

49.Ընկերության ներքին աուդիտորը տարեկան առնվազն մեկ անգամ ստուգումներ է իրականացնում հավաստիանալու, որ Ընկերության ամբողջ գործունեությունը ներառյալ գործադիր մարմնի և Ներքին դիտարկումների ստորաբաժանման գործունեությունը լիարժեք համապատասխանում է Օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Կանոնակարգով սահմանված պահանջներին:

50.Ընկերության ներքին դիտարկումների մարմնի գործառույթների՝ Ընկերության ներքին աուդիտորի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացման հաշվառմամբ և շահերի բախման իրավիճակներից խուսափելու համար՝ Ընկերության մասնակիցների ժողովը պետք է նշանակի ներքին դիտարկումների գործառույթները ստուգող այլ ստորաբաժանում՝ սահմանելով կազմը, ստուգման ժամանակահատվածը և գործառույթների շրջանակը:

51. Ներքին աուդիտորը Ընկերության բաժնետերերին և գործադիր մարմնին պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը: